

ԻԳՆԱՏԻՈՍ ՍԱՐԿԱՎԱԳ

ՆՈՐ ՏԱՐԻ

Կես գիշեր է... տասներկու... Մեկն էլ գընաց հավերժին,
Մեկն էլ պոկվեց գալիքից, նոր ամանոր մի ծնվեց,
Հինը անցավ անտրտունջ, նորը եկավ խնդագին,
Դադարեց սիրտը մեկին, մյուսն սկսեց թափով մեծ...

Սեր է հորդում իմ սրտից և ըղձանքներ բազմաբյուր,
Այս լուսավետ, կենսաշող, նրաշալի գիշերին,
Երջանկության, բերկրանքի, հույսի, խինդի հորդ աղբյուր,
Ինչպես գարուն նոր կյանքի՝ բոլոր ազնիվ սրտերին...

Տենչը կյանքի լուսավոր, եղբայրությունն անսասան,
Հոգիներում թող լցվեն և ուռճանան անխափան,
Բոլորն ապրին թող խինդով, երջանկության մեջ ցնծան...

Խաղաղությո՜ւն ու հանգի՜ստ, խաղաղությո՜ւն անսահման՝
Բոլոր նրանց, որ կյանքի, լույսի համար ծնվեցին,
Բոլոր նրանց, որ ընկան աշխերնին դեպ՝ ապագան...

Այս մեծասքանչ գիշերին՝ խաղաղությո՜ւն ամենքին...